



## ՓՈԽՈՒՄՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: ՏԱՂԱԲԱՐ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Անհարսնացեա՛լ Աստուածածին, որ անսկիզբ Բանը յղացար եւ անբովանդակելի Աստուծոյ ծնունդ տուիր, որ գրկիդ մէջ առիր այն Էակը, զոր երկինքն իսկ կարող չէ պարփակել, անդադար բարեխօսե՛ անոր մօտ՝ մեր հոգիներուն համար:

# ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԴՉ.

Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ, վերաբուսած Յեսսէի արմատէն, Եսայի կանխապէս Յոգիի եօթնարփեան շնորհքներուն ընդունարան ըլլալ կոչեց քեզ. Աստուածածին եւ Կոյս, քեզ կը մեծարենք:

Քաղցրահամ պտուղի բանաւոր բարունակ, որմէ մեզի համար անսպառ ողկոյզ քաղուեցաւ որպէս ուրախութիւն գիտութեան ծառէն ճաշակելու (հետեւանքով), տրտմածներու համար: Անարատ սրբուհի, բոլորս քեզ կը մեծարենք:

Ապրելով մարմնի մէջ անարատ վարքով, այսօր առաքելներով շրջապատուած աստուածային հրամանով եւ իշխանութեամբ Քու Որդիիդ եւ մեր Աստուծոյ Արքայութիւնը փոխադրուեցար, խոստովանողներու որպէս բարեխօս, քեզ կը մեծարենք:

## ՄԵՍԵՂԻ (Սղ. 131, 7,1)

Կանգնէ՛, Տէր, դէպի քու հանգիստդ, դուն եւ տապանակը սրբութեանդ:  
Յիշէ՛, Տէր, Դաւիթը եւ անոր հեզութիւնը:

## ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆԸ

**Պօղոս Առաքելին Գաղատացիներուն ուղղած Թուղթէն Է այս ընթերցուածը.**  
(Գաղ. 3, 29-4,7)

Եթէ Քրիստոսի կը պատկանիք, ուրեմըն Աբրահամի սերունդ էք, ժառանգորդներ՝ խոստումին համաձայն: Արդ՝ ես կ'ըսեմ. ցորքան ժամանակ ժառանգորդը տղայ է, ծառայէն աւելի բարձր չէ, թէպէտ տերն է բոլոր ինչքերուն: Խնամակալներու եւ տնտեսներու հովանաւորութեան տակ է մինչեւ Հօր կողմէ որոշուած թուականը: Մենք ալ, մեր տղայութեան շրջանին, ենթակայ էինք աշխարհի տարրերուն: Երբ հասաւ ժամանակներու լրումը, Աստուած զրկեց Իր Որդին, որ ծնաւ կնոջմէ, մտաւ Օրէնքի տակ, որպէսզի ազատագրէ օրէնքի հպատակները եւ մեզի պարգեւէ որդեգրութեան շնորհքը: Քանի որ դուք որդիներ էք, Աստուած զրկեց մեր սրտերուն մէջ Իր Որդիին Հոգին, որ կ'աղաղակէ՝ «Աբբա՛, Հայր»: Ուրեմն այսուհետեւ ծառայ չես, այլ՝ որդի. եթէ որդի՝ ուրեմն Աստուծոյ շնորհքով ժառանգորդ:



**Ալեյուհա, Ալեյուհա,**

Այսօր Դաւիթի քաղաքին մէջ, ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ Տէրն է:  
Արուսեակը դեռ գոյութիւն անգամ չունէր, երբ ես քեզ արդէն ծնած էի:  
(Ղուկ. 2,11 եւ Սղմ. 109, 3բ.)

**Ալեյուհա:**

**ԱԻԵՏԱՐԱՆ**  
**ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ/ՎԵՐԱՓՈԽՈՒՄ**  
(Ղուկ. 2. 1-7)

**Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Ծնունդի մասին.**

Այն օրերուն, Օգոստոս Կայսրին կողմէ հրամանագիր մը ելաւ, մարդահամար ընելու ամբողջ աշխարհին վրայ: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ, երբ Կիւրենիոս կուսակալ էր Սուրիոյ: Ամենքը կ'երթային մարդահամարի, իւրաքանչիւրը իր քաղաքը: Յովսէփ, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն մեկնեցաւ դէպի Զրեաստան, Դաւիթի քաղաքը՝ Բեթղեհէմ, որովհետեւ Դաւիթի տունէն ու սերունդէն էր, արձանագրուելու համար իր կնոջ՝ Մարիամի հետ, որ յղի էր: Մինչ այնտեղ կը գտնուէին, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ որդին, փաթթեց խանձարուրներով ու դրաւ մսուրին մէջ, որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար անոնց համար:



**ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ**

**Տօն Փոխման Սրբոյ Կուսին Մարիամու Աստուածածնի**

**Մարիամ՝  
Թագուհի Երկնքի եւ Երկրի**

Մարիամ ամեն քրիստոնեայի սրբտին մէջ հարկ է որ ունենայ յատուկ տեղ մը. իւրաքանչիւր հաւատացեալ մշակելու է բարեպաշտութիւնը հանդէպ Տիրամօր, որովհետեւ ան է որ կը բարեխօսէ մեզի համար՝ հարկաւոր շնորհքները ընդունելու յօգուտ մեր ան-

ձին: Հայկական եկեղեցիներու մէջ միշտ ի պատուի դրուած է, ընդհանրապէս Աւագ խորանին վրայ, Աստուածածնայ պատկերը:

Աստուածածնայ Վերափոխումը խորհուրդ մըն է, զոր մարդկային մտքով չենք հասկնար. Անոր կը հաւատանք պարզապէս, որովհետեւ Եկեղեցւոյ աւանդութիւնը զայն մեզի փոխանցած է դարերու ընդմէջէն: Այսինքն

կը հաւատանք թէ Մարիամ մահուընէ վերջ՝ իր մարմինը փտտութիւն չէ տեսած այլ՝ նման Յիսուսի, ինք եւս մարմնով եւ հոգով երկինք վերացած է, վերափոխուած է: Մարիամի կեանքի վերջաւորութեան պատահած առանձնաշնորհումը պատճառ դարձաւ որ Եկեղեցոյ Հայրերը ընդունէին եւ հաստատէին իր կեանքի սկիզբն ստացած շնորհները: Աւետարանը չի յիշեր Աստուածածնայ երկինք վերափոխուիլը, սակայն ասոր վկաները եղած են առաքելները:

Այսօր, կարգ մը գիտնականներ, քրիստոնէայ աշխարհի մէջ իսկ, տարակոյսի մէջ կը դնեն այս աւանդութիւնը: Ստոյգ է որ եթէ զանազան պատճառաբանութիւններ կատարենք, պիտի չհասնինք լուծելու այն դժուարութիւնները, որոնք երեւան կու գան սոյն խորհուրդէն. Սակայն մենք գիտենք թէ խորհուրդին պէտք է հաւա-

տալ, պէտք չէ պատճառաբանել: Երբ կը հաւատանք խորհուրդներուն՝ կը մտնենք անոնց մէջ եւ կ'օգտուինք անոնց առթած բոլոր բարիքներէն, որովհետեւ խորհուրդը մեզ կ'առաջնորդէ դէպի փրկութեան ճանապահը, եւ փրկութիւնը յառաջ եկած է խորհուրդէն:

Աստուածամայրը երկինք կը գտնուի իր կուսական մարմնով: Ամենասուրբ Կոյսը, Մայր Աստուծոյ, է՝ միանգամայն մեր Մայրը:

Նարեկացի Տիրամօր հանդէպ իր յոյսը արծարծելու համար կ'ընտ. «Յետ Աստուծոյ մեր յոյսն ես, քեզի կ'ապաւինինք, Ո՛վ Տիրամայր, անարատ ծնող Բանին Աստուծոյ»: Հայ Եկեղեցին մեծ շուքով կը տօնախմբէ Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ այս առթիւ Սուրբ եւ Անմահ Պատարագի ակարտիսն՝ աւանդական Խաղողօրհնէքը կը կատարուի:

